



ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ (ՄԱՆԻԿԱԼ)

ՄԱՆԻԿԱԼ(2009)25ADD

Փոխադարձ Գնահատման Հստակացումները ՀԱԿԵԼԿԱԾ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

22 սեպտեմբերի, 2009 թ.

Հայաստանը ՄԱՆԻՎԱԼ-ի անդամ է: Սույն գնահատումն իրականացվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից: ՄԱՆԻՎԱԼ-ի ներկայացուցիչն ԱՄՀ-ի թիմի հետ միասին մասնակցել է գնահատման աշխատանքների մի մասին՝ ուսումնասիրելով համապատասխանությունը փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ Եվրոպական Միության դիրեկտիվների պահանջներին այն մասով, որով դրանք տարբերվում են ՖԱԹՖ-ի հանձնարարականներից և, ըստ այդմ, տեղավորվում են ՄԱՆԻՎԱԼ-ի ուսումնասիրությունների շրջանակի մեջ: Հաշվետվությունը ՄԱՆԻՎԱԼ-ը հաստատել է որպես երրորդ փուլի փոխադարձ գնահատում՝ 30-րդ լիազումար նիստում (Ստրասբուրգ, 21-24 սեպտեմբեր, 2009 թ.):

© [2009] Հանցավորության հիմնախնդիրների Եվրոպական կոմիտե (ՀՀԵԿ) / Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների հանձնախումբ (ՄԱՆԻՎԱԼ) և ԱՄՀ:
Բոլոր իրավունքները պաշտպանված են: Վերարտադրությունը թույլատրվում է պայմանով, որ նշվի աղբյուրը, եթե այլ բան նախատեսված չէ: Այս հրապարակման որևէ մաս չի կարող առևտրային նպատակներով թարգմանվել, վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ որևէ եղանակով՝ էլեկտրոնային (CD-սկավառակ, ինտերնետ կամ այլ) կամ մեխանիկական, ներառյալ պատճենահանումը, ձայնագրումը կամ տեղեկատվության պահպանման կամ վերականգնման համակարգը առանց Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարության (F-67075 Strasbourg or dghl.moneyval@coe.int) նախօրոք գրավոր թույլտվության:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերաբերյալ ԵՄ 3-րդ դիրեկտիվին համապատասխանությունը

Հայաստանը Եվրոպական Միության անդամ պետություն չէ և ուղղակի պարտավորություն չի կրում՝ իրագործելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման նպատակով ֆինանսական համակարգի օգտագործումը կանխելու վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2005 թ. հոկտեմբերի 26-ի 2005/60/EC դիրեկտիվը (հետայսու՝ «Դիրեկտիվ») և Եվրոպական հանձնաժողովի 2006 թ. օգոստոսի 1-ի 2006/70/EC դիրեկտիվը, որով ամրագրվել են Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2005/60/EC դիրեկտիվի իրագործումն ապահովող միջոցառումները «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» եզրույթի սահմանման, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պարզեցված ընթացակարգի կիրառության տեխնիկական չափորոշիչների, ինչպես նաև հազվադեպ կամ շատ սահմանափակ չափով իրականացվող ֆինանսական գործունեության նկատմամբ որոշակի պահանջներ չկիրառելու տեխնիկական չափորոշիչների մասով:

Հետևյալ բաժնում նկարագրված են Դիրեկտիվի և ՖԱԹՖ-ի Քառասուն հանձնարարականների և ԻՆՂ հատուկ հանձնարարականների համապատասխան նորմերի միջև առկա հիմնական տարբերությունները: ԵՄ իրավական չափանիշների գործող տեքստը գետնելված է I հավելվածում:

1.	Իրավաբանական անձանց պատասխանատվությունը
<i>Դիրեկտիվի 39-րդ հոդված</i>	Անդամ պետությունները պարտավոր են ապահովել սույն Դիրեկտիվի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտումների համար Դիրեկտիվի կարգավորման դաշտում գործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու հնարավորության առկայությունը:
<i>ՖԱԹՖ-ի Հ.2 և Հ.17</i>	Փողերի լվացման համար նախատեսված քրեական պատասխանատվությունը պետք է տարածվի նաև իրավաբանական անձանց նկատմամբ: Այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ (այսինքն՝ պայմանավորված ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներով), պետք է կիրառելի լինի քաղաքացիական կամ վարչական պատասխանատվություն:
<i>Հիմնական տարրերը</i>	Դիրեկտիվով չի նախատեսվում բացառություն իրավաբանական անձանց պատասխանատվության մասով, որը տարածվում է ոչ միայն ՓԼ հանցագործության, այլ նաև՝ Դիրեկտիվի համաձայն ընդունված ազգային դրույթներով նախատեսված հանցագործությունների նկատմամբ: Ինչպիսի՞նք մոտեցում է ամրագրված Ձեր իրավական համակարգում:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	<p>Քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն, քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք՝ ի արտացոլումն քրեաիրավական պատիժների անհատական բնույթի և «<i>nullum crimen sine culpa</i>» (չկա հանցանք առանց մեղքի) հանրաճանաչ սկզբունքի:</p> <p>Չնայած որ լուրջ վեճի առարկա է այն հանգամանքը, թե արդյոք քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի հիմնարար նշանակությամբ բացառվում է քրեական պատասխանատվության տարածումն իրավաբանական անձանց նկատմամբ, սույն խնդիրը Դիրեկտիվի շրջանակում էական չէ, քանի որ գործող օրենսդրությամբ այդ պարտավորությունը ֆորմալ առումով չի նախատեսվում, և ամրագրված է միայն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը (հոդվածներ 39.1 և 39.3):</p> <p>Հայաստանում փողերի լվացման մեջ ներգրավված իրավաբանական</p>

	անծինք «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն ենթարկվում են վարչական պատասխանատվության: Ավելին, հաշվետու բոլոր անծինք՝ ֆիզիկական թե՛ իրավաբանական, կրում են վարչական պատասխանատվություն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի պահանջների խախտումների դեպքում («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 27-րդ հոդված):
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

2. Անանուն հաշիվները	
<i>Դիրեկտիվի 6-րդ հոդված</i>	Անդամ պետությունները պարտավոր են իրենց վարկային և ֆինանսական հաստատություններին արգելել վարել անանուն հաշիվներ կամ անանուն հաշվեգրքույկներ:
<i>ՖԱԹՖ-ի Հ.5</i>	Ֆինանսական հաստատությունները չպետք է վարեն անանուն հաշիվներ կամ անկնհայտորեն մտացածին անուններով հաշիվներ:
<i>Հիմնական տարրերը</i>	Թե Դիրեկտիվով, թե ՖԱԹՖ-ի հանձնարարականով արգելվում են անանուն հաշիվները՝ միաժամանակ թույլատրելով համարակալված հաշիվները: Դիրեկտիվով թույլատրվում են մտացածին անուններով հաշիվները և հաշվեգրքույկները, սակայն դրանց նկատմամբ ցանկացած դեպքում պետք է իրականացվեն ՀՊՈՒ լիարժեք միջոցառումներ: Ինչպիսի՞ մոտեցում է ամրագրված Ձեր իրավական համակարգում մտացածին անուններով հաշիվների և հաշվեգրքույկների մասով:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով չի թույլատրվում անանուն հաշիվների արգելիքից որևէ բացառություն կատարել: Օրենքի 17-րդ հոդվածով ուղղակիորեն ամրագրվում է բացել, սպասարկել կամ տրամադրել (1) անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ, ինչպես նաև այլ վճարային փաստաթղթեր, ինչպես նաև (2) միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ:
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

3. Նվազագույն շեմը (ՀՊՈՒ)	
<i>Դիրեկտիվի 7բ) հոդված</i>	Դիրեկտիվի կարգավորման դաշտում գործող անծինք և հաստատությունները պարտավոր են ՀՊՈՒ միջոցառումներ իրականացնել 15,000 եվրո կամ ավելի մեծ ընդհանուր գումարով միանգամյա գործարքներ կատարելիս:
<i>ՖԱԹՖ-ի Հ.5</i>	Ֆինանսական հաստատությունները պետք է իրականացնեն ՀՊՈՒ կիրառելի նախատեսված նվազագույն շեմից բարձր գումարով միանգամյա գործարքներ կատարելիս:
<i>Հիմնական տարրերը</i>	Պահանջը տարածվում է արդյոք 15,000 եվրո գումարով գործարքների և փոխկապակցված գործարքների նկատմամբ:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	ՀՊՈՒ նույնականացման կանոնները տարածվում են ցանկացած միանգամյա գործարքի նկատմամբ, որի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը (մոտ 1,000 եվրո) («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ):
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

4. Իրական շահառուն	
<i>Դիրեկտիվի 3(ճ) հոդված (տես հավելվածը)</i>	«Իրական շահառու» եզրույթի սահմանմամբ նախատեսվում են այն նվազագույն չափորոշիչները (բաժնեմասը՝ տոկոսային արտահայտությամբ), որոնց առկայության դեպքում ֆիզիկական անձը պետք է համարվի իրավաբանական անձի կամ

	իրավաբանական կազմավորման իրական շահառու:
<i>ՖԱԹՖ-ի Հ.5 (մասնագիտական եզրույթների բառարան)</i>	«Իրական շահառուն» այն ֆիզիկական անձն է (անձինք), ով վերջին հաշվով հանդիսանում է հաճախորդի և/կամ այն անձի սեփականատերը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնողը, ում անունից իրականացվում է գործարք: Ներառում է նաև այն անձանց, ովքեր վերջնական արդյունավետ վերահսկողություն են իրականացնում իրավաբանական անձի կամ կազմավորման նկատմամբ:
<i>Հիմնական տարրերը</i>	Ո՞ր մոտեցումն է կիրառվում Ձեր երկրում «իրական շահառու» եզրույթի սահմանման հարցում: Խնդրում ենք նշել, թե արդյոք Ձեր օրենսդրության մեջ արտացոլված են «իրական շահառու» եզրույթի՝ ԵՄ սահմանման չափորոշիչները:
	<p>Դիրեկտիվի 3(6) հոդվածում նշվում են (ա) կորպորատիվ անձինք, և (բ) իրավաբանական անձինք (օրինակ՝ հիմնադրամներ) և իրավաբանական կազմավորումները (օրինակ՝ տրաստեր): «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքը համահունչ է Դիրեկտիվին, որի 3-րդ հոդվածի 15-րդ կետով «իրական շահառուի» հասկացությունն իրավաբանական անձանց («իրավաբանական անձ» եզրույթը ներառում է և կորպորատիվ անձանց, և իրավաբանական անձանց) պարագայում սահմանվում է հետևյալ կերպ. «...ֆիզիկական անձ, որը փաստացի (իրականում) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի (գործարար հարաբերության) նկատմամբ և (կամ) ի շահ որի իրականացվում է գործարար հարաբերությունը կամ գործարքը: Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև ֆիզիկական անձը, որը. 1) քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, հետայսու՝ բաժնետոմս) քսան և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել դրա որոշումները, 2) հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ, 3) գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից»:</p> <p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ կետով նախատեսված «իրավաբանական անձի» հասկացությունը, սակայն, չի ներառում պայմանագրային բնույթի իրավաբանական կազմավորումները (օրինակ՝ տրաստերը), որոնք իրավաբանական անձի կարգավիճակ չունեն: Չնայած Հայաստանում դրանց գոյություն չունենալու և Հայաստանի իրավական համակարգով նախատեսված չլինելու հանգամանքին, Դիրեկտիվի 3(6)(բ) հոդվածով նախատեսված պարտավորությունը, որի շրջանակում պահանջները պետք է տարածել նաև Հայաստանում գործող օտարերկրյա իրավաբանական կազմավորումների իրական շահառուների նկատմամբ, բնականաբար պահպանվում է:</p>
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է մասամբ՝ իրավաբանական անձանց պարագայում: Ի հակադրություն Դիրեկտիվի, իրական շահառուների վերաբերյալ պահանջները Հայաստանի օրենսդրության համաձայն ուղղակիորեն չեն տարածվում իրավաբանական կազմավորումների նկատմամբ:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	Իրական շահառուների վերաբերյալ սկզբունքները Հայաստանում անհրաժեշտ է սահմանել Դիրեկտիվի կոնկրետ նորմերին համահունչ կերպով՝ դրանք տարածելով նաև իրավաբանական անձանց և կազմավորումների նկատմամբ:

5.	Հազվադեպ կամ շատ սահմանափակ չափով իրականացվող ֆինանսական գործունեությունը	
<i>Դիրեկտիվի 2(2) հոդված</i>	Անդամ պետությունները կարող են որոշում կայացնել, որ հազվադեպ կամ շատ սահմանափակ չափով որոշակի	

	<p>Ֆինանսական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր ռիսկի պարագայում, չտարածվեն Դիրեկտիվի 3(1) կամ 3(2) հոդվածների պահանջները: Այս դրույթը մանրամասնեցված է Հանձնաժողովի 2006/70/EC դիրեկտիվի 4-րդ հոդվածում:</p>
<p><i>ՖԱԹՖ-ի ֆինանսական հաստատություններին վերաբերող հանձնարարականը</i></p>	<p>Երբ ֆինանսական գործունեության կոնկրետ տեսակը ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից հազվադեպ կամ շատ սահմանափակ չափով է իրականացվում (դատելով քանակական և բացարձակ չափորոշիչների հիման վրա), որի պատճառով այդ կապակցությամբ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման գործունեության ծավալման ռիսկը ցածր է, պետությունը կարող է որոշում կայացնել այն մասին, որ փողերի լվացման դեմ պայքարի որոշ միջոցառումների կիրառությունն ամբողջությամբ կամ մասամբ անհրաժեշտ չէ (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2004 թ. մեթոդաբանություն, 23-րդ կետ, ինչպես նաև ՖԱԹՖ-ի Քառասուն հանձնարարականների և Ինը հատուկ հանձնարարականների կատարումը գնահատելու մեթոդաբանության մեջ օգտագործված մասնագիտական եզրույթների բացատրական բառարան):</p>
<p><i>Հիմնական տարրերը</i></p>	<p>Ձեր երկիրը ներդրել է Հանձնաժողովի 2006/70/EC դիրեկտիվի 4-րդ հոդվածը:</p>
<p><i>Նկարագրություն և վերլուծություն</i></p>	<p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետում, որտեղ թվարկվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորություններ կրող անձինք, ֆինանսական գործունեության հազվադեպ կամ սահմանափակ բնույթով պայմանավորվող բացառություններ նախատեսված չեն:</p>
<p><i>Եզրակացություն</i></p>	<p>Հայաստանի օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված չեն բացառություններ հազվադեպ կամ սահմանափակ չափով իրականացվող ֆինանսական գործունեության մասով:</p>
<p><i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i></p>	

<p>6. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պարզեցված միջոցառումները</p>	
<p><i>Դիրեկտիվի 11-րդ հոդված</i></p>	<p>Համապատասխան հոդվածից բացառության կարգով, Դիրեկտիվով ամրագրվում են այն դեպքերը, որոնցում հաստատությունները և անձինք կարող են ՀՊՈԲ միջոցառումներ չկիրառել: Այնուհանդերձ, պահպանվում է ՀՊՈԲ բավարար տեղեկատվություն ձեռք բերելու պարտավորությունը:</p>
<p><i>ՖԱԹՖ-ի Հ.5</i></p>	<p>Չնայած որ ընդհանուր կանոնի համաձայն հաճախորդների նկատմամբ պետք է կիրառել ՀՊՈԲ միջոցառումների ողջ շրջանակը, կան դեպքեր, երբ կարելի է կիրառել նվազեցված կամ պարզեցված միջոցառումներ:</p>
<p><i>Հիմնական տարրերը</i></p>	<p>Ներդրվել է կամ կիրառվում է Հանձնաժողովի 2006/70/EC դիրեկտիվի 3-րդ հոդվածը, որն ավելի ընդգրկուն է, քան ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2004 թ. մեթոդաբանության 5.9 չափորոշիչը:</p>
<p><i>Նկարագրություն և վերլուծություն</i></p>	<p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով թույլատրվում է ՀՊՈԲ պարզեցված միջոցառումների իրականացումը: Ավելի ցածր ռիսկի խմբերը նախատեսված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հետ կապված Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 6-րդ գլխով և Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցի 7-րդ մասով: Հանձնաժողովի դիրեկտիվի 3.1, 3.2 և 3.3 հոդվածներով նախատեսվում են «հանրային իշխանությունների կամ հանրային մարմինների», ինչպես նաև «հանրային իշխանության կամ հանրային մարմնի կարգավիճակ չունեցող, սակայն իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների» որոշման շատ մանրակրկիտ և հստակ չափորոշիչներ, ինչպես նաև այն «ծառայությունների տեսակների» որոշման չափորոշիչները/պայմանները, որոնց նկատմամբ կարելի</p>

	<p>է կիրառել պարզեցված ՀՊՈՒ:</p> <p>Հայաստանում չեն ներդրվել և չեն կիրառվում Հանձնաժողովի 2006/70/EC դիրեկտիվի 3-րդ հոդվածով ամրագրված տեխնիկական չափորոշիչները: Հետևաբար, պարզեցված ՀՊՈՒ կիրառելու հնարավորություններն ավելի ընդարձակ են, քան ԵՄ դիրեկտիվի 11-րդ հոդվածով և Հանձնաժողովի դիրեկտիվի 3-րդ հոդվածով նախատեսված սահմանափակ թվով դեպքերը:</p> <p>Ավելին, ԵՄ դիրեկտիվի 11.1 հոդվածի իմաստով, Դիրեկտիվի կարգավորման դաշտում գործող վարկային և ֆինանսական հաստատությունների կամ համարժեք երրորդ պետությունների նկատմամբ պարզեցված ՀՊՈՒ կիրառելու պարտավորությունը սահմանված չէ: Պարզեցված ՀՊՈՒ-ի կիրառությունը մնում է ընտրովի:</p>
<i>Եզրակացություն</i>	<p>Հայաստանը պարզեցված ՀՊՈՒ-ն չի կիրառում ԵՄ դիրեկտիվի և Հանձնաժողովի դիրեկտիվի խիստ չափորոշիչներին համապատասխան: Հայաստանում նախատեսված չէ բացառություն ԵՄ-ի կամ համարժեք բանկերի համար, որը ԵՄ դիրեկտիվի համաձայն պարտադիր է:</p>
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	<p>Հայաստանը պետք է հաշվի առնի պարզեցված ՀՊՈՒ-ի կիրառության կոնկրետ և խիստ չափորոշիչները՝ այնպես, ինչպես դրանք ամրագրված են ԵՄ դիրեկտիվի և Հանձնաժողովի դիրեկտիվի մեջ:</p>

7. Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք (ՔԱՈՒԱ-ներ)	
<i>Դիրեկտիվի 3(8), 13(4) հոդվածներ (տես հավելվածը)</i>	<p>«ՔԱՈՒԱ» եզրույթի՝ Դիրեկտիվով նախատեսված սահմանումն ընդհանուր առմամբ համահունչ է ՖԱԹՖ-ի Քառասուն հանձնարարականներով նախատեսվածին (3(8) հոդված): Դիրեկտիվի համաձայն, ԵՄ մեկ այլ անդամ պետության կամ ԵՄ անդամ չհանդիսացող պետության տարածքում բնակվող ՔԱՈՒԱ-ների նկատմամբ պետք է իրականացնել հավելյալ ՀՊՈՒ (13(4) հոդված): 2006/70/EC դիրեկտիվով նախատեսվում է «ՔԱՈՒԱ» եզրույթի ավելի լայն սահմանում, ինչպես նաև՝ ՔԱՈՒԱ-ի կարգավիճակի դադարեցում տվյալ ՔԱՈՒԱ-ի բարձր հանրային պաշտոնում պաշտոնավարության ավարտից մեկ տարի հետո (2(4) հոդված):</p>
<i>ՖԱԹՖ-ի Հ.6 և մասնագիտական եզրույթների բառարանը</i>	<p>Սահմանումը նման է Դիրեկտիվին, սակայն կիրառելի է օտար պետությունում բարձր հանրային պաշտոն գբաղեցնող անհատների նկատմամբ:</p>
<i>Հիմնական տարրերը</i>	<p>Ձեր երկրում ներդրվել է Հանձնաժողովի 2006/70/EC դիրեկտիվի 2-րդ հոդվածը, մասնավորապես՝ 2(4) կետը: Ձեր երկրում կիրառվում է Դիրեկտիվի 13(4) հոդվածը:</p>
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	<p>ՔԱՈՒԱ-ներին բարձր ռիսկային համարելու մոտեցումն ամրագրված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասում: Այս դրույթը վերաբերում է ոչ միայն ՔԱՈՒԱ-ներին, այլև՝ նրանց ընտանիքի անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց: Դա համահունչ է Դիրեկտիվի 3.8 և 13.4 հոդվածներին, չնայած որ Դիրեկտիվն անդրադառնում է «սերտ կապի մեջ գտնվողներին»:</p> <p>ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքում գործածված՝ «փոխկապակցված անձ» եզրույթը սահմանված է «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում՝ որպես անձինք, ովքեր «...վարում են համատեղ ձեռնարկատիրական գործունեություն ... կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից», որն ըստ էության մեծ մասամբ ներառում է Դիրեկտիվի մեջ գործածված «սերտ կապի մեջ գտնվողներ» հասկացությունը:</p> <p>Հայաստանը հետևում է ՖԱԹՖ-ի մոտեցմանը՝ կարգավորման շրջանակի մեջ ներառելով նաև օտար պետությունում հանրային գործառնություններ իրականացնող ՔԱՈՒԱ-ներին՝ անկախ բնակության</p>

	վայրից (ԵՄ դիրեկտիվի չափորոշիչ): ՔԱՌԲԱ-ների սահմանումը չի ներառում 2006/70/EC դիրեկտիվի 2.4 հոդվածով թույլատրված մեկամյա ժամանակահատվածի սահմանափակումը:
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

8. Թղթակցային բանկային հարաբերությունները	
<i>Դիրեկտիվի 13(3) հոդված</i>	Թղթակցային բանկային հարաբերությունների պարագայում Դիրեկտիվի 13(3) հոդվածով հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրությունը (հավելյալ ՀՊՈԻ) սահմանափակվում է ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների հաստատությունների հետ թղթակցային բանկային հարաբերություններով:
<i>ՖԱԹՖ-ի Հ.7</i>	Թիվ 7 հանձնարարականը տարածվում է բոլոր երկրների նկատմամբ:
<i>Հիմնական տարրերը</i>	Ձեր երկիրը կիրառու՞մ է Դիրեկտիվի 13(3) հոդվածը:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	Հայաստանի Հանրապետության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենսդրության մեջ («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ կետ) ընդունված է «բոլոր երկրների» մոտեցումը, որի համաձայն հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրության (հավելյալ ՀՊՈԻ) իրականացումը չի սահմանափակվում միայն ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների հաստատությունների հետ թղթակցային բանկային հարաբերություններով:
<i>Եզրակացություն</i>	Հայաստանում չի կիրառվում Դիրեկտիվի 13(3) հոդվածով նախատեսված սահմանափակումը, և բացառություն նախատեսված չէ ԵՄ անդամ պետությունների համար՝ չնայած որ այդ իրավասությունը Հայաստանն ունի:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

9. Հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրությունը (հավելյալ ՀՊՈԻ) և անանունությունը	
<i>Դիրեկտիվի 13(6) հոդված</i>	Դիրեկտիվով պահանջվում է հավելյալ ՀՊՈԻ իրականացնել ՓԼ կամ ԱՖ այն վտանգների դեպքում, որոնք կարող են բխել անանունության համար բարենպաստ պայմաններ ստեղծող ծառայությունների տեսակներից կամ գործարքներից:
<i>ՖԱԹՖ-ի Հ.8</i>	Ֆինանսական հաստատությունները պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն փողերի լվացման այն վտանգներին, որոնք կարող են բխել անանունության համար բարենպաստ պայմաններ ստեղծող նոր կամ գարգացող տեխնոլոգիաներից [...]:
<i>Հիմնական տարրերը</i>	Դիրեկտիվի 13(6) հոդվածի շրջանակն ավելի լայն է, քան ՖԱԹՖ-ի Հ.8-ի շրջանակը, քանի որ Դիրեկտիվով կարգավորվում են ծառայությունների տեսակները կամ գործարքները՝ անկախ տեխնոլոգիայի գործածության հանգամանքից: Ինչպե՞ս են այս խնդիրները կարգավորվում Ձեր օրենսդրությամբ:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածով նախատեսվում է, որ ֆինանսական հաստատությունը պետք է իր ներքին իրավական ակտերով նախատեսի և կիրառի նոր կամ գարգացող տեխնոլոգիաների կիրառմամբ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերին հակազդելու համապատասխան միջոցներ: Ֆինանսական հաստատությունը պետք է հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ ընթացիկ ուսումնասիրություն իրականացնելիս իր ներքին իրավական ակտերով սահմանված կարգով նախատեսի առանց առերես շփման գործարար հարաբերությունների կամ գործարքների հետ պայմանավորված բոլոր ռիսկերի կանխարգելման մեխանիզմները»:

	<p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով նախատեսվում է, որ «բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում» հաշվետվություն տրամադրող անձը պետք է ձեռնարկի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ռիսկերին համարժեք միջոցներ, և որ բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում ֆինանսական հաստատությունը պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն: Բարձր ռիսկի չափանիշների մանրամասները և դրանց որոշման կանոններն ամրագրված են Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 5-րդ գլխով: Չափանիշները ներառում են, ի թիվս այլոց, առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը կամ էլեկտրոնային միջոցներով կամ նամակագրությամբ իրականացվող հազվադեպ գործարքները (առանց առերես շփման հարաբերություններ):</p>
<i>Եզրակացություն</i>	<p>Չնայած որ անանունության համար բարենպաստ պայմաններ ստեղծող ծառայությունների տեսակներից կամ գործարքներից ծագող ՓԼ կամ ԱՖ հնարավոր վտանգների դեպքում հավելյալ ՀՊՈՒ իրականացնելու մասին դրույթ ուղղակիորեն ամրագրված չէ, գործող դրույթներով, ինչպես նշվեց, 13.6 հոդվածով նախատեսված իրավիճակների համար սահմանվում է ռիսկերի վրա հիմնված պատշաճ մոտեցումը և հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրությունը:</p>
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

10. Երրորդ անձանց վրա հենվելը	
<i>Դիրեկտիվի 15-րդ հոդված</i>	<p>Դիրեկտիվով թույլատրվում է որոշակի դեպքերում ՀՊՈՒ-ի իրականացման համար հենվել ԵՄ անդամ պետությունների կամ այլ պետությունների մասնագիտացված, որակավորում ունեցող երրորդ անձանց վրա:</p>
<i>ՖԱԹՖ-ի Հ.9</i>	<p>Թույլատրվում է ՀՊՈՒ իրականացման համար հենվել երրորդ անձանց վրա, սակայն չի մասնավորեցվում, թե կոնկրետ որ անձինք և մասնագիտությունների ներկայացուցիչները կարող են այդ նպատակով համարվել սահմանված պահանջները բավարարող երրորդ անձինք:</p>
<i>Հիմնական տարրերը</i>	<p>Ի՞նչ կանոններ և ընթացակարգեր են սահմանված երրորդ անձանց վրա հենվելու համար: Կա՞ն հատուկ պայմաններ կամ անձանց հատուկ խմբեր, որոնք կարող են համարվել սահմանված պահանջները բավարարող երրորդ անձինք:</p>
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	<p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ կետով ընդհանուր կերպով նախատեսվում է, որ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից «հաճախորդի նույնականացման և տեղեկությունների իսկության ստուգման ժամանակ» կարող են «հիմք ծառայել» հաշվետվություն տրամադրող այլ անձանց, մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց կողմից հաճախորդի նույնականացման և տեղեկությունների իսկության ստուգման արդյունքում ստացված տվյալները:</p> <p>Այնուամենայնիվ, ՀՊՈՒ-ի տարրերն իրականացնելու նպատակով երրորդ անձանց վրա հենվելու հնարավորությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով կամ ուղեցույցներով առավել մանրամասնորեն նախատեսված չէ: Երրորդ անձանց վրա հենվելու պայմանների/ընթացակարգերի որոշումն օրենքը թողնում է ֆինանսական հաստատություններին՝ նշելով, որ դա կարող է արվել «միայն հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով»:</p> <p>Օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ մասում օգտագործված՝ «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» արտահայտությունը</p>

	սահմանված չէ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքում և համահունչ չէ Դիրեկտիվով նախատեսված այն սուբյեկտների շրջանակին, որոնց վրա կարելի է հենվել ՀՊՈՒ-ի իրականացման նպատակով: Հայաստանի օրենսդրությամբ չհասկացված հասկացությունը չափազանց ընդգրկուն է, քանի որ դրա շրջանակում կարող է ընդգրկվել ցանկացած անձ, որն ունի երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն:
<i>Եզրակացություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ կետին որոշ չափազանց ընդգրկուն է և չի կարող համապատասխանել Դիրեկտիվի 15-րդ հոդվածով նախատեսված ավելի նեղ ձևակերպմանը:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	«Մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունը պետք է սահմանել այնպես, որ այն համահունչ լինի Դիրեկտիվին, մասնավորապես՝ սահմանափակելով այն միայն ֆինանսական հաստատություն կամ ՆՈՖԳՏՄ հանդիսացող «երրորդ անձանցով»՝ հասկացության շրջանակից բացառելով «երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց»:

11. Աուդիտորներ, հաշվապահներ և հարկային խորհրդատուներ	
<i>Դիրեկտիվի 2(1)(3)(ա) հոդված</i>	ՀՊՈՒ-ի և գրառումները վարելու պարտավորություններն իրենց մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում կրում են նաև աուդիտորները, արտաքին հաշվապահները և հարկային խորհրդատուները:
<i>ՖԱԹՅ-ի Հ.12</i>	ՀՊՈՒ-ի և գրառումներ վարելու պարտավորություններ. 1. Չեն կրում աուդիտորները և հարկային խորհրդատուները, 2. Հաշվապահները կրում են այն ժամանակ, երբ հաճախորդի անունից նախապատրաստում կամ իրականացնում են գործարքներ հետևյալ գործունեության առնչությամբ. <ul style="list-style-type: none"> • Անշարժ գույքի առք և վաճառք, • Հաճախորդի փողի, արժեթղթերի կամ այլ գույքի կառավարում, • Բանկային, խնայողական կամ արժեթղթերի հաշիվների կառավարում, • Ընկերությունների ստեղծման, գործունեության իրականացման կամ կառավարման համար գումարների հանգանակումների կազմակերպում, • Իրավաբանական անձանց կամ կազմավորումների ստեղծում, գործունեության վարում կամ կառավարում, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների առք և վաճառք: (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2004 թ. մեթոդաբանություն, չափորոշիչ 12.1(դ)):
<i>Հիմնական տարրերը</i>	Դիրեկտիվի շրջանակն ավելի լայն է, քան ՖԱԹՅ-ի ստանդարտներով նախատեսվածը, սակայն Դիրեկտիվի շրջանակը ներառում է հաշվապահների գործունեության՝ 12.1(դ) չափորոշիչ մեջ նկարագրված ոչ բոլոր տեսակները: Խնդրում ենք բացատրել աուդիտորների, արտաքին հաշվապահների և հարկային խորհրդատուների ՀՊՈՒ-ի և հաշվետվական պարտավորությունների շրջանակը:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	Հարկային խորհրդատուի մասնագիտությունը Հայաստանում գոյություն չունի. ուստի, չկան նաև այն որպես այդպիսին կարգավորող նորմեր: Գործունեության այս տեսակն իրականացնում են այլ մասնագետներ (օրինակ՝ հաշվապահներ և իրավաբաններ), որոնց նկատմամբ տարածվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունները: Այնուհանդերձ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի դրույթները նշված մասնագիտությունների ոչ ամբողջ մասնագիտական գործունեության նկատմամբ են կիրառելի (հաշվետվական պարտավորության մասով տես նաև «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը): «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսվում է, որ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության

	<p>կանոնները անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ տարածվում են հետևյալ դեպքերում՝ միայն հաճախորդի համար նախապատրաստվող կամ իրականացվող հետևյալ գործարքների մասով՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ անշարժ գույքի առուվաճառք, ▪ հաճախորդի դրամական միջոցների, արժեթղթերի կամ այլ գույքի կառավարում, ▪ բանկային հաշիվների կառավարում, ▪ իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման համար դրամական միջոցների կամ այլ գույքի տրամադրում. ▪ իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման գործառույթների իրականացում, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալի (բաժնեհավաք կապիտալի և այլն) 75 տոկոսը գերազանցող բաժնի (մասնակցության, փայի և այլն) առուվաճառք, կամ իրավաբանական անձանց՝ 20 միլիոն դրամը գերազանցող անվանական կամ շուկայական արժեքով բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առուվաճառք:
<i>Եզրակացություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը համահունչ է՝ Դիրեկտիվին, որի համաձայն պահանջները պետք է տարածվեն աուդիտորների և հաշվապահների նկատմամբ իրենց մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում՝ առանց որևէ սահմանափակման:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	Հայաստանի օրենսդիրը պետք է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունների շրջանակն ընդլայնի՝ դրանում ներառելու աուդիտորների և հաշվապահների <u>ամբողջ</u> մասնագիտական գործունեությունը:

12.	Բարձրարժեք ապրանքների դիլերներ
<i>Դիրեկտիվի 2(1)(3)ե հոդված</i>	Դիրեկտիվը տարածվում է այն ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց կողմից իրականացվող առևտրի շրջանակում կանխիկով կատարվող վճարումները կազմում են 15,000 եվրո կամ ավելին:
<i>ՖԱԹՖ-ի Հ. 12</i>	Պահանջները կիրառելի են միայն թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի դիլերների նկատմամբ:
<i>Հիմնական տարրերը</i>	Դիրեկտիվի շրջանակն ավելի լայն է: Ձեր օրենսդրության մեջ որդեգրված է արդյոք կիրառության ավելի լայն շրջանակը:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, համապատասխան պահանջները կիրառելի են միայն թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի դիլերների, արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների նկատմամբ՝ միայն հաճախորդի հետ կանխիկ գործարքների մասով: Պահանջները չեն տարածվում որոշակի նվազագույն շեմը գերազանցող արժեք ունեցող ապրանքների առուվաճառքով զբաղվող այլ անձանց (օրինակ՝ ավտոմեքենաների դիլերների, նավեր վաճառողների և այլ անձանց) նկատմամբ:
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվին ապահովված է մասամբ. պահանջները ներկայումս չեն տարածվում բարձրարժեք ապրանքների դիլերների նկատմամբ ընդհանրապես:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	Բարձրարժեք ապրանքների բոլոր դիլերները պետք է ներառվեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի գործողության դաշտի մեջ՝ 15,000 եվրո կամ ավելի կանխիկով վճարումների մասով:

13.	Խաղատները
<i>Դիրեկտիվի 10-րդ հոդված</i>	Անդամ պետությունները պետք է պահանջեն խաղատների բոլոր հաճախորդների նույնականացում և նրանց ինքնության ստուգում

	այն դեպքերում, երբ նրանց կողմից գնվող կամ փոխանակվող խաղանիշերի արժեքը 2,000 եվրո է կամ ավելին: Այս պահանջը չի գործում, եթե մուտքի պահին իրականացվում է նրանց նույնականացում:
<i>ՖԱԹՖ-ի Հ. 16</i>	Հաճախորդի ինքնությունը պետք է պարզել և ստուգել, եթե նրա կողմից իրականացվող ֆինանսական գործարքի արժեքը կազմում է 3,000 եվրո կամ ավելին:
<i>Հիմնական տարրերը</i>	Ո՞ր իրավիճակներում է պահանջվում իրականացնել խաղատների հաճախորդների նույնականացում: Ձեր երկրում գործարքի ի՞նչ նվազագույն շեմ է կիրառելի խաղատների հաճախորդների կողմից իրականացվող ֆինանսական գործարքների նույնականացման համար:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության կանոնները խաղատների նկատմամբ տարածվում են միայն հաճախորդի կողմից կատարվող գործարքների (խաղանիշերի գնման, խաղադրույքների կատարման կամ շահումների) մասով՝ եթե գործարքի գումարը գերազանցում է 1 միլիոն դրամը (մոտ 1,900 եվրո):
<i>Եզրակացություն</i>	1,900 եվրոյի համարժեքի նվազագույն շեմը համահունչ է Դիրեկտիվով պահանջվող նվազագույն գումարի չափին (2,000 եվրո):
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

14. Հաշվապահների, աուդիտորների, հարկային խորհրդատուների, նոտարների և իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետների կողմից հաշվետվությունների տրամադրումը ՖՀՄ-ին ինքնակարգավորվող մարմնի միջոցով	
<i>Դիրեկտիվի 23(1) հոդված</i>	Այս հոդվածով հաշվապահներին, աուդիտորներին, հարկային խորհրդատուներին, նոտարներին և իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետներին հնարավորություն է ընձեռվում՝ հաշվետվություններ տրամադրել ինքնակարգավորվող մարմնի միջոցով, որը պարտավոր է ԿԳ-ներն անհապաղ և առանց գտելու փոխանցել ՖՀՄ-ին:
<i>ՖԱԹՖ-ի հանձնարարականներ</i>	ՖԱԹՖ-ի հանձնարարականներով նման տարբերակ նախատեսված չէ:
<i>Հիմնական տարրերը</i>	Երկիրն օգտագործում է Դիրեկտիվի 23(1) հոդվածով նախատեսված այս տարբերակը:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	Հայաստանը որոշել է ինքնակարգավորվող մարմնի միջոցով հաշվետվության տրամադրման ռեժիմ չնախատեսել հաշվետվություն տրամադրող անձանց այս խմբի համար:
<i>Եզրակացություն</i>	Դիտողություններ չկան:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

15. Հաշվետվություն տրամադրելու պարտավորությունները	
<i>Դիրեկտիվի 22-րդ և 24-րդ հոդվածներ</i>	Դիրեկտիվով պահանջվում է հաշվետվություն տրամադրել այն դեպքում, երբ հաստատությունը տեղյակ է, կասկածում է, կամ ողջամիտ հիմքեր ունի՝ կասկածելու, որ իրականացվում է փողերի լվացում կամ ահաբեկչության ֆինանսավորվում (22-րդ հոդված): Այս պարտավորությունը կրող անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ գործարքն իրականացնելուց, եթե գիտեն կամ կասկածում են, որ գործարքը կապված է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ: Նրանք պարտավոր են նաև գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրել ՖՀՄ-ին, որը կարող է կասեցնել գործարքը: Եթե գործարքի կատարումից ձեռնպահ մնալն անհնար է կամ կարող է խոչընդոտել հետաքննությանը, ապա պարտավորությունը կրող անձինք պարտավոր են ՖՀՄ-ին հաշվետվություն տրամադրել գործարքի կատարումից անմիջապես հետո (24-րդ հոդված):

ՖԱԹՖ-ի Հ. 13	Հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը սահմանվում է այն դեպքում, երբ կասկած կա, որ միջոցները ստացվել են հանցավոր գործունեությունից կամ առնչվում են ահաբեկչության ֆինանսավորման հետ:
Հիմնական տարրերը	Ի՞նչ պայմանի առկայության դեպքում է առաջանում հաշվետվություն տրամադրելու պարտավորությունը: Իրավական դաշտում նախատեսված է «ակնկալմամբ» (« <i>ex ante</i> ») հաշվետվություն տրամադրելու պահանջ (Դիրեկտիվի 24-րդ հոդված):
Նկարագրություն և վերլուծություն	<p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, որով կարգավորվում են գործարքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պահանջները, հաշվետվություն տրամադրելու պարտավորությունն առաջանում է այն ժամանակ, երբ ՖԴԿ-ն ստանում է հաշվետվությունների հետևյալ 3 տեսակները.</p> <ul style="list-style-type: none"> - Գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամի (մոտ 55,000 դոլար) նվազագույն շեմը՝ հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց մասով, բացառությամբ փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, - Անշարժ գույքի հետ կապված գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը (մոտ 130,000 դոլար), - Կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ՝ անկախ գումարի չափից: <p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Կենտրոնական բանկի 2008 թ. հուլիսի 31-ի 231-Ն որոշմամբ կասկածելի գործարքի հաշվետվություն ներկայացնելու ժամկետ է սահմանվել «միննույն աշխատանքային օրը կամ, եթե դա հնարավոր չէ՝ նախքան հաջորդ աշխատանքային օրվա կեսօրը»: Ավելին, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, ֆինանսական հաստատությունն «իրավունք ունի» առավելագույնը 5 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին «անմիջապես» ներկայացնել հաշվետվություն:</p> <p>Չնայած որ վերոհիշյալ դրույթներով ամրագրվում են ժամկետներ և իրավական դաշտ, որով հաշվետվություն տրամադրող անձը պաշտպանվում է գործարքն անմիջապես չկատարելու կամ սառեցման գործողություններ ձեռնարկելու համար հնարավոր պատասխանատվությունից, դրանցով չի նախատեսվում <i>նախապես</i> («<i>a priori</i>») ՖՀՄ-ին տեղեկացնելու ուղղակի ընդհանուր պահանջ, որը ՖՀՄ-ին հնարավորություն կընձեռե իրականացնելու կանխարգելիչ անհրաժեշտ միջոցառումներ: Ուստի, գոյություն չունի նախապես տեղեկացնելու ընդհանուր պարտավորություն, որից նախատեսված կլինեին բացառություններ միայն կոնկրետ հանգամանքների համար՝ ինչպես նշված է Դիրեկտիվի 24.2 հոդվածում:</p>
Եզրակացություն	Չի համապատասխանում:
Առաջարկություններ և մեկնաբանություններ	Օրենքով պետք է նախատեսվի կասկածելի գործարքը կատարելուց առաջ հաշվետվություն տրամադրելու ընդհանուր կանոնը՝ բացառություն նախատեսելով միայն Դիրեկտիվի 24.2 հոդվածով ամրագրված կոնկրետ դեպքերի համար:

16.	Տեղեկատվության բացահայտումը (1)
Դիրեկտիվի 27-րդ հոդված	27-րդ հոդվածով նախատեսվում է Անդամ պետությունների պարտավորությունը՝ հաշվետվություն տրամադրող հաստատությունների աշխատակիցներին պաշտպանելու վտանգներից կամ չարամիտ գործողություններից:
ՖԱԹՖ-ի Հ. 14	Համարժեք պահանջ չկա (տնօրենները, պաշտոնատար անձինք և

	աշխատողները պետք է օրենքով պաշտպանված լինեն տեղեկատվության բացահայտման արգելքները խախտելու համար հնարավոր քրեական և քաղաքացիական պատասխանատվությունից, որն արտացոլված է Դիրեկտիվի 26-րդ հոդվածում):
<i>Հիմնական տարրերը</i>	Դիրեկտիվի 27-րդ հոդվածը Ձեր իրավական համակարգում ներդրված է:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	Դիրեկտիվի 27-րդ հոդվածը ներդրված է ի դեմս «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 12-րդ հոդվածի, որով նախատեսվում է, որ լիազոր մարմնին արգելվում է հրապարակել կամ այլ կերպ տրամադրել որևէ տեղեկատվություն (բացառությամբ օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդման մարմիններին կամ այլ մարմիններին տրամադրվող տեղեկատվության), որը կբացահայտի կամ կարող է նպաստել բացահայտմանը ցանկացած անձի, որը տրամադրել է կասկածելի գործարքը (գործարար հարաբերությունը) և (կամ) մասնակցել է դրա մասին լիազոր մարմնին հաշվետվության տրամադրմանը կամ լիազոր մարմնի կողմից քրեական հետապնդման մարմիններին հաղորդման տրամադրմանը:
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

17.	Տեղեկատվության բացահայտումը (2)
<i>Դիրեկտիվի 28-րդ հոդված</i>	Տեղեկատվության բացահայտման արգելքը տարածվում է նաև այն իրավիճակների նկատմամբ, որոնցում իրականացվում է կամ կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման գործի քննություն: Դիրեկտիվով ամրագրվում են այն դեպքեր, որոնցում արգելքը կիրառելի չէ:
<i>ՖԱԹՖ-ի Հ. 14</i>	Հ.14-ով նախատեսված պարտավորությունը վերաբերում է ՖՀԱ-ին ԿԳՀ կամ այլ տեղեկատվություն ներկայացնելու կամ տրամադրելու փաստը երրորդ կողմին հայտնելու արգելքին:
<i>Հիմնական տարրերը</i>	Ո՞ր հանգամանքներում են կիրառվում տեղեկատվության չբացահայտման հետ կապված պարտավորությունները: Կա՞ն բացառություններ:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ «հաշվետվություն տրամադրող անձին, նրա աշխատակիցներին ու ներկայացուցիչներին արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկատվություն է տրամադրվում լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկատվության տրամադրման փաստի մասին»: Այս արգելքից որևէ բացառություն նախատեսված չէ: Արգելքը կիրառելի է նաև վերահսկող և իրավապահ մարմինների հետ հաշվետվություն տրամադրող անձի հարաբերությունների նկատմամբ: Ավելին, տեղեկատվությունը բացահայտելու արգելքը ԵՄ դիրեկտիվի 28.2-ից 6 հոդվածների համաձայն չկիրառելու հնարավորությունը Հայաստանում չի նախատեսվել:
<i>Եզրակացություն</i>	Դիրեկտիվի 28.1 հոդվածի պահանջները ոչ ամբողջովին են բավարարված, քանի որ տեղեկատվության բացահայտման արգելքը չի վերաբերում այն դեպքերին, երբ իրականացվում է կամ կարող է իրականացվել ՓԼ կամ ԱՖ գործի քննություն: Նախատեսված չեն արգելքի կիրառման բացառությունները՝ Դիրեկտիվի 28.2-ից 6 հոդվածների համաձայն:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	Օրենքում անհրաժեշտ է տեղեկատվության բացահայտման արգելքի ռեժիմը փոփոխել՝ վերջինս լիովին համապատասխանեցնելով Դիրեկտիվի 28.1 և 2 հոդվածներին:

18.	Մասնաձյուղեր և դուստր ձեռնարկություններ (1)
<i>Դիրեկտիվի 34(2) հոդված</i>	Դիրեկտիվով վարկային և ֆինանսական հաստատություններից պահանջվում է այլ (ԵՄ անդամ չհանդիսացող) պետություններում գործող մասնաձյուղերին և մեծ մասամբ իրենց պատկանող դուստր

	ծեռնարկություններին տեղեկացնել համապատասխան ներքին կանոնակարգերի և ընթացակարգերի մասին, որոնք, մասնավորապես, վերաբերում են ՀՊՈՒ-ին, հաշվետվությունների տրամադրմանը, գրառումների վարմանը, ներքին հսկողությանը, ռիսկերի գնահատմանը, համապատասխանության կառավարմանը և հաղորդակցությանը:
<i>ՖԱԹՖ-ի Հ.15 և Հ.22</i>	ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականներով նախատեսված պարտավորություններից բխում է ավելի ընդգրկուն և բարձր ստանդարտ, սակայն ամրագրված չեն ԵՄ դիրեկտիվի 34(2) հոդվածով նախատեսված պարտավորությունները:
<i>Հիմնական տարրերը</i>	Դիրեկտիվի 34(2) հոդվածով նախատեսված պարտավորությունն ամրագրված է:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ «հաշվետվություն տրամադրող անձինք պարտավոր են հանձնարարել օտարերկրյա պետություններում կամ տարածքներում գտնվող իրենց մասնաձյուղերին և ներկայացուցչություններին կիրառել սույն օրենքի և սույն օրենքից բխող իրավական այլ ակտերի պահանջները, եթե սույն օրենքը և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերը սահմանում են ավելի խիստ նորմեր, քան մասնաձյուղի կամ ներկայացուցչության գտնվելու վայրի պետության օրենքներն ու իրավական այլ ակտերը»:
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

19. Մասնաձյուղեր և դուստր ձեռնարկություններ (2)	
<i>Դիրեկտիվի 31(3) հոդված</i>	Դիրեկտիվով նախատեսված պահանջի համաձայն, այն դեպքերում, երբ ԵՄ անդամ չհանդիսացող պետության օրենսդրությամբ չի թույլատրվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համարժեք միջոցառումների կիրառությունը, վարկային և ֆինանսական հաստատությունները պետք է լրացուցիչ միջոցառումներ իրականացնեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկն արդյունավետորեն կառավարելու ուղղությամբ:
<i>ՖԱԹՖ-ի Հ.22 և Հ.21</i>	Ֆինանսական հաստատություններից պահանջվում է նման դեպքերում տեղեկացնել լիազոր մարմիններին:
<i>Հիմնական տարրերը</i>	Ի՞նչ լրացուցիչ միջոցառումներ են պարտավոր ձեռնարկել Ձեր ֆինանսական հաստատություններն այն դեպքերում, երբ ԵՄ անդամ չհանդիսացող պետության օրենսդրությամբ չի թույլատրվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համարժեք միջոցառումների կիրառությունը Ձեր ֆինանսական հաստատության օտարերկրյա մասնաձյուղերի կողմից:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով այս կապակցությամբ նախատեսվում է, որ «եթե մասնաձյուղի կամ ներկայացուցչության գտնվելու վայրի պետության օրենքներն ու իրավական այլ ակտերն արգելում են կամ հնարավորություն չեն տալիս կիրառելու սույն օրենքի և սույն օրենքից բխող իրավական այլ ակտերի պահանջները, ապա մասնաձյուղը կամ ներկայացուցչությունը պետք է այդ մասին տեղեկացնի հաշվետվություն տրամադրող անձին, իսկ հաշվետվություն տրամադրող անձը` լիազոր մարմնին»: Կոնկրետացված չէ, թե լիազոր մարմինն ինչ միջոցառումներ է ձեռնարկելու այդուհետ` ՓԼ/ԱՖ ավելի մեծ ռիսկը նվազեցնելու ուղղությամբ:
<i>Եզրակացություն</i>	Մասամբ համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռեժիմում հստակ չէ, թե ՓԼ/ԱՖ ավելի մեծ ռիսկն ինչպես կարելի է արդյունավետորեն հաղթահարել: Այս առումով անհրաժեշտ են ավելի կոնկրետ դրույթներ:

20. Վերահսկող մարմինները	
<i>Դիրեկտիվի 25(1)</i>	Դիրեկտիվով նախատեսվում է վերահսկող մարմինների

<i>հողված</i>	պարտավորությունը՝ ՖՀՄ-ին տեղեկացնելու այն դեպքերի մասին, երբ իրենց աշխատանքի ընթացքում հանդիպում են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման առկայության մասին վկայող փաստերի:
<i>ՖԱԹՖ-ի Հ.</i>	Համարժեք պարտավորություն նախատեսված չէ:
<i>Հիմնական տարրերը</i>	Ձեր իրավական համակարգում ներդրված է Դիրեկտիվի 25(1) հոդվածի պահանջը:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ «փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում իրականացված ստուգման արդյունքների, ինչպես նաև կիրառված պատասխանատվության միջոցների մասին լիազոր մարմնի սահմանած կարգով վերահսկող մարմինները տեղեկացնում են լիազոր մարմնին»: Այս կանոնը, մասնավորապես՝ ֆինանսական վերահսկողության մարմնի մասով, առավել մանրամասնեցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և ֆինանսական վերահսկողության վարչության համագործակցության ձեռնարկում: Չնայած որ ընդհանուր եզրույթները («ստուգման արդյունքներ») մեկնաբանությամբ կարող են ներառել նաև չբացահայտման կոնկրետ դեպքեր, համապատասխան պարտավորություն ամրագրված չէ, և հնարավոր են տարաբնույթ մեկնաբանություններ:
<i>Եզրակացություն</i>	Հաշվետվություն չտրամադրելու դեպքերի մասին ՖՀՄ-ին տեղեկացնելու՝ վերահսկող մարմինների պարտավորությունը բավականաչափ հստակորեն ամրագրված չէ:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	Օրենքով պետք է վերահսկող մարմիններից ուղղակիորեն և հստակորեն պահանջել՝ ՖՀՄ-ին տեղեկացնելու բոլոր այն դեպքերի մասին, երբ չի ներկայացվել կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն, որը կարող էր ապացուցողական արժեք ունենալ:

21. Լիազոր մարմիններին պատասխանելու համար անհրաժեշտ համակարգերը	
<i>Դիրեկտիվի 32-րդ հոդված</i>	Դիրեկտիվով վարկային և ֆինանսական հաստատություններից պահանջվում է ունենալ համակարգեր, որոնք նրանց հնարավորություն կընձեռեն լիարժեք և անհապաղ կերպով պատասխանել ՖՀՄ-ի կամ այլ իրավասու մարմինների հարցումներին այն մասին, թե արդյոք իրենց կողմից վարվում կամ նախորդ հինգ տարիներին վարվել են գործարար հարաբերություններ կոնկրետ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ:
<i>ՖԱԹՖ-ի Հ.</i>	Համարժեք պահանջ որպես այդպիսին չկա, սակայն նման պահանջ ընդհանուր առմամբ կարելի է բխեցնել 23-րդ, ինչպես նաև 26-32-րդ հանձնարարականներից:
<i>Հիմնական տարրերը</i>	Վարկային և ֆինանսական հաստատություններից պահանջվում է ունենալ և արդյունավետորեն կիրառել նման համակարգեր:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածով այս կապակցությամբ նախատեսվում է հետևյալը. «Հաշվետվություն տրամադրող անձինք լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պետք է պահպանեն սույն օրենքով պահանջվող առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝ 1) Հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները և գործարար թղթակցության տվյալները՝ գործարար հարաբերության ավարտից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար. 2) Գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները, որոնք հնարավորություն կտան վերականգնելու գործարքի (գործարար հարաբերության) իրական

	<p>պատկերը՝ գործարքի կատարումից (գործարար հարաբերության դադարեցումից) հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար:</p> <p>Սույն օրենքով պահանջվող և հաշվետվություն տրամադրող անձի կողմից պահպանվող տեղեկատվությունը պետք է բավարար լինի լիազոր մարմնի կողմից կամ օրենքով սահմանված դեպքերում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից հարցվող գործարքների (գործարար հարաբերությունների) վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տրամադրման համար»:</p> <p>«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է նաև, որ «սույն օրենքով պահանջվող և հաշվետվություն տրամադրող անձի կողմից պահպանվող տեղեկատվությունը պետք է բավարար լինի լիազոր մարմնի կողմից կամ օրենքով սահմանված դեպքերում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից հարցվող գործարքների (գործարար հարաբերությունների) վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տրամադրման համար»:</p> <p>Նշված պարտավորությունը մանրամասնեցված է Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 39-րդ կետում, որում պարզաբանվում է, որ հաշվառման և պահպանման ենթակա տեղեկատվությունը պետք է պահպանվի «այնպիսի եղանակով, որը կապահովի հետագայում դրա օգտագործումը որպես ապացույց»: Իշխանությունները նշեցին, որ «ապացույցների» բովանդակությանը և ձևին ներկայացվող պահանջներն ամրագրված են քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերում:</p>
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

22. Պահանջների կիրառությունն այլ մասնագիտությունների և գործունեության այլ տեսակների նկատմամբ	
<i>Դիրեկտիվի 4-րդ հոդված</i>	Դիրեկտիվով նախատեսվում է ԵՄ անդամ պետությունների պարտադիր պարտավորությունը՝ Դիրեկտիվի պահանջները Ա.2(1) հոդվածում նշվածներից գատ կիրառելու նաև այլ մասնագիտությունների և գործունեության այլ տեսակների նկատմամբ, որոնց պարագայում ավելի մեծ է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակին ծառայեցվելու հավանականությունը:
<i>ՖԱԹԻ-ի Հ.20</i>	Պետություններից պահանջվում է միայն դիտարկել պահանջներն այլ մասնագիտությունների և գործունեության այլ տեսակների նկատմամբ կիրառելու նպատակահարմարությունը:
<i>Հիմնական տարրերը</i>	Ձեր պետությունը ներդրել է Դիրեկտիվի 4-րդ հոդվածի պարտադիր պահանջը, որի համաձայն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պարտավորությունները պետք է կիրառվեն նաև այլ մասնագիտությունների և գործունեության այլ տեսակների նկատմամբ, որոնց պարագայում ավելի մեծ է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակին ծառայեցվելու հավանականությունը: Այս կապակցությամբ իրականացվել է ռիսկերի գնահատում:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	<p>Հայաստանյան իշխանությունները նշեցին, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքը 2008 թվականին վերանայելու ընթացքում իրականացրել են ռիսկերի գնահատում՝ օրենքի պահանջների կիրառությունը տարածելով նաև հետևյալ ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց նկատմամբ.</p> <ul style="list-style-type: none"> - Գրավատներ, - Ռիելտորներ (անշարժ գույքի գործակալներ), - Նոտարներ, - Փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ

	<p>մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք,</p> <ul style="list-style-type: none"> - Անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, - Անհատ ձեռնարկատեր աուդիտորներ և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, - Թանկարժեք մետաղների դիլերներ, - Թանկարժեք քարերի դիլերներ, - Արվեստի գործերի դիլերներ, - Սակարկությունների կազմակերպիչներ, - Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատներ, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք, - Հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք: <p>Ինչպես նշվեց, փոփոխված օրենքի համաձայն Դիրեկտիվի 2(1) հոդվածի պահանջները չտարածվեցին ՓԼ/ԱՖ նկատմամբ զգայուն համարվող բոլոր ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ (տես վերը՝ 11 և 12): Մյուս կողմից, օրենքի շրջանակն ավելի լայն է, քան Դիրեկտիվը, քանի որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի գործողության դաշտի մեջ ներառվել են այլ ձեռնարկություններ, օրինակ՝ սակարկությունների կազմակերպիչները և գրավատները՝ առանց նվազագույն շեմի սահմանափակումների:</p>
<i>Եզրակացություն</i>	Համապատասխանում է:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

23. Կոնկրետ դրույթներ համարժեքություն ապահովող երրորդ պետությունների վերաբերյալ	
<i>Դիրեկտիվի 11-րդ, 16(1)(բ), 28(4),(5) հոդվածներ</i>	Դիրեկտիվով նախատեսվում են կոնկրետ դրույթներ Դիրեկտիվով սահմանված պահանջներին համարժեք պահանջներ (օրինակ՝ պարզեցված ՀՊՈՒ-ի պահանջ) ամրագրող պետությունների վերաբերյալ:
<i>ՖԱԹՖ-ի Հ.</i>	ՖԱԹՖ-ի Քառասուն հանձնարարականները և Ինը հատուկ հանձնարարականները համապատասխան կոնկրետ դրույթ չեն պարունակում:
<i>Հիմնական տարրերը</i>	Ինչպես՞ն է Ձեր պետությունն անդրադարձել համարժեքություն ապահովող երրորդ պետությունների խնդրին:
<i>Նկարագրություն և վերլուծություն</i>	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չեն կոնկրետ դրույթներ, որոնցով կթույլատրվեր ավելի մեղմ պահանջներ, օրինակ՝ պարզեցված ՀՊՈՒ-ի պահանջներ կիրառել համարժեքություն ապահովող երրորդ պետությունների նկատմամբ:
<i>Եզրակացություն</i>	Դիտողություններ չկան:
<i>Առաջարկություններ և մեկնաբանություններ</i>	

I ՀԱՎԵԼՎԱԾ. ԵՄ գործող իրավական դրույթները

Քաղվածք Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2005/60/EC դիրեկտիվից, որը պաշտոնապես ընդունվել է 2005 թ. սեպտեմբերի 20-ին և վերաբերում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման նպատակով ֆինանսական համակարգի չարաշահման կանխարգելմանը:

ԵՄ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2005/60/EC դիրեկտիվի (3-րդ դիրեկտիվ) 3(6) հոդվածը.

6) «իրական շահառուն» այն ֆիզիկական անձն է (անձինք), ով վերջին հաշվով հանդիսանում է հաճախորդի և/կամ այն ֆիզիկական անձի սեփականատերը կամ նրա

նկատմամբ վերահսկողություն իրականացնողը, ում անունից իրականացվում է գործարք կամ գործունեություն: Իրական շահառուն ներառում է առնվազն հետևյալ անձանց.

(ա) Կորպորատիվ անձանց պարագայում.

- (i) ֆիզիկական անձը (անձինք), ով իրավաբանական անձի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի սեփականության իրավունքների կամ իրավաբանական անձի բաժնետոմսերի կամ քվեարկելու իրավունքների, ներառյալ՝ տվյալ իրավաբանական անձի «ըստ ներկայացնողի» բաժնետոմսերի սեփականության իրավունքների կամ քվեարկության իրավունքների բավականաչափ մեծ տոկոսաբաժնի վերահսկողության միջոցով վերջին հաշվով հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի սեփականատերը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնողը, բացառությամբ կարգավորվող շուկայում ցուցակված ընկերությունների, որոնց նկատմամբ ԵՄ օրենսդրության համաձայն տարածվում են բացահայտման պահանջները կամ համարժեք միջազգային ստանդարտներ. այս չափորոշիչը կատարված համարելու համար բավարար է 25% գումարած մեկ բաժնետոմսը,
- (ii) ֆիզիկական անձը (անձինք), ով այլ կերպ վերահսկողություն է իրականացնում իրավաբանական անձի ղեկավարության նկատմամբ:

(բ) Իրավաբանական անձանց պարագայում, ինչպիսիք են հիմնադրամները և իրավաբանական կազմավորումները, ներառյալ՝ տրաստերը, որոնք կառավարում և տեղաբաշխում են միջոցներ.

- (i) այն դեպքում, երբ ապագա շահառուներն արդեն որոշվել են, այն ֆիզիկական անձը (անձինք), ով հանդիսանում է իրավաբանական կազմավորման կամ իրավաբանական անձի գույքի 25 կամ ավելի տոկոսի շահառուն,
- (ii) այն դեպքում, երբ դեռ չեն որոշվել իրավաբանական կազմավորումից կամ իրավաբանական անձից շահ ստացող ֆիզիկական անձինք, այն անձանց դասը, ում հիմնական շահն իրավաբանական կազմավորման կամ իրավաբանական անձի ստեղծումը կամ գործունեության ծավալումն է,
- (iii) ֆիզիկական անձը (անձինք), ով վերահսկողություն է իրականացնում իրավաբանական կազմավորման կամ իրավաբանական անձի գույքի 25 կամ ավելի տոկոսի նկատմամբ:

ԵՄ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2005/60/EC դիրեկտիվի (3-րդ դիրեկտիվ) 3(8) հոդվածը.

(8) «Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք» այն անձինք են, ում ներկայումս կամ անցյալում վերապահվել են կարևոր հանրային գործառույթներ, ինչպես նաև նրանց անմիջական ընտանիքի անդամները կամ այլ անձինք, ովքեր հայտնի են որպես նման անձանց հետ սերտորեն փոխկապակցված անձինք:

Քաղվածք Հանձնաժողովի 2006 թ. օգոստոսի 1-ի 2006/70/EC դիրեկտիվից, որով ամրագրվում են Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2005/60/EC դիրեկտիվի իրագործումն ապահովող միջոցառումները «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» եզրույթի սահմանման, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պարզեցված ընթացակարգի կիրառության տեխնիկական չափորոշիչների, ինչպես նաև հազվադեպ կամ շատ սահմանափակ չափով իրականացվող ֆինանսական գործունեության նկատմամբ որոշակի պահանջներ չկիրառելու տեխնիկական չափորոշիչների մասով:

Հանձնաժողովի 2006/70/EC դիրեկտիվի («իրագործումն ապահովող դիրեկտիվ») 2-րդ հոդվածը.

Հոդված 2
Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք

1. 2005/60/EC դիրեկտիվի 3(8) հոդվածի իմաստով, «ֆիզիկական անձինք, ում ներկայումս կամ անցյալում վերապահվել են կարևոր հանրային գործառնություններ» ներառում են.

(ա) պետությունների, կառավարությունների ղեկավարներին, նախարարներին, նրանց տեղակալներին, փոխնախարարներին,

(բ) խորհրդարանի անդամներին,

(գ) գերագույն դատարանների, սահմանադրական դատարանների կամ այլ այնպիսի բարձր դատական ատյանների անդամներին, որոնց որոշումները հետագա բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ սահմանված բացառիկ դեպքերի,

(դ) վերահսկիչ պալատների կամ կենտրոնական բանկի խորհրդի անդամներին,

(ե) ղեսպաններին, գործերի հավատարմատարներին և զինված ուժերի բարձրաստիճան սպայական անձնակազմին,

(զ) պետությանը պատկանող ձեռնարկությունների կառավարման, ղեկավարման կամ վերահսկողության մարմինների անդամներին:

Առաջին պարբերության (ա)-(զ) կետերում թվարկված խմբերից ոչ մեկը չի ներառում միջին դասի կամ ավելի կրտսեր պաշտոնյաներին:

Առաջին պարբերության (ա)-(ե) կետերում թվարկված խմբերը համապատասխան դեպքերում ներառում են Եվրոպական Ընկերակցության և միջազգային մակարդակով զբաղեցված պաշտոնները:

2. 2005/60/EC դիրեկտիվի 3(8) հոդվածի իմաստով, «ընտանիքի անմիջական անդամները» ներառում են.

(ա) կնոջը/ամուսնուն,

(բ) ցանկացած զուգընկերոջ, ով ազգային օրենսդրությամբ համարվում է կնոջը/ամուսնուն համարժեք,

(գ) երեխաներին, նրանց կանանց/ամուսիններին և զուգընկերներին,

(դ) ծնողներին:

3. 2005/60/EC դիրեկտիվի 3(8) հոդվածի իմաստով, «անձինք, ովքեր հայտնի են որպես սերտորեն փոխկապակցված անձինք» ներառում են.

(ա) ցանկացած ֆիզիկական անձի, ով հայտնի է որպես իրավաբանական անձանց կամ իրավաբանական կազմավորումների կամ այլ սերտ գործարար հարաբերությունների՝ առաջին պարբերության մեջ թվարկված անձանցից որևէ մեկի հետ միասին համատեղ իրական շահառու,

(բ) ցանկացած ֆիզիկական անձի, ով հանդիսանում է այնպիսի իրավաբանական անձի կամ իրավաբանական կազմավորման իրական շահառուն, որի վերաբերյալ հայտնի է, որ այն ստեղծվել է փաստացի ի շահ առաջին պարբերության մեջ նշված անձի:

4. Չսահմանափակելով ռիսկի նկատմամբ զգայունության հիման վրա հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրության միջոցառումների իրականացումն այն դեպքերում, երբ սույն հոդվածի առաջին պարբերության իմաստով անձին վերապահված կարևոր հանրային գործառնությի գործողությունը դադարել է առնվազն մեկ տարի առաջ, այնուհանդերձ, 2005/60/EC դիրեկտիվի 2(1) հոդվածում նշված հաստատությունները և անձինք պարտավոր չեն այդ անձին համարել քաղաքական ազդեցություն ունեցող անձ: